

ԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լրատու

ՓԵՏՐՎԱՐ 16 - 25 2016 թ. ԹԻՎ 3 (2091) ՏԱՍԵՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՍ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅ



Փոխշահավետ հարաբերությունների զարգացում

Հնդկաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Հնդկաստանի գյուղատնտեսության հետազոտությունների ինստիտուտ, որտեղ նրան ընդունել է ինստիտուտի տնօրեն Թրիլոյան Սոհապատրան:

Նախարարը շնչել է ինստիտուտի պատմության թանգարանում, ծանոթացել այդ կառույցի գործունեությանը: Այնուհետև նախարարը հանդիպում է ունեցել ինստիտուտի առաջավոր գիտնականների հետ, որոնք ներկայացրել են ինստիտուտի ավելի քան հարյուրամյա գործունեության ընթացքում ձեռք բերված հաջողությունները:

Նախարար Սերգո Կարապետյանն իր հերթին ընդգծել է գիտական, հետազոտական համակարգերի կարևորությունը գյուղատնտեսության զարգացման գործում և հույս հայտնել, որ այս այցը կնպաստի ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Հնդկաստանի գյուղատնտեսության հետազոտությունների ինստիտուտի միջև փոխշահավետ հարաբերությունների զարգացմանը: Այս համատեքստում նախարարը հատկապես կարևորել է փոխայցելությունների, գիտական կառույցների միջև համագործակցության խթանման անհրաժեշտությունը:

Նախարարը եղել է նաև ինստիտուտի փորձարարական դաշտերում, ծանոթացել գիտափորձերի արդյունքներին:

Համաձայնագիր երկու նախարարությունների միջև

Պաշտոնական այցով Հնդկաստանում գտնվող ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպել է Հնդկաստանի գյուղատնտեսության նախարար Ռադհա Սոհան Սինգի հետ:

Ընդգծելով հանդիպման և այցի կարևորությունը երկկողմ հարաբերությունների զարգացման համար՝ նախարար Կարապետյանը մատնանշել է հնարավոր համագործակցության հիմնական ուղղությունները՝ ընդգծելով գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման, գիտահետազոտական, կրթական, խորհրդատվական համակարգերի միջև փոխայցելությունների միջոցով կապերի ամրապնդման հարցերը: Նախարարը նաև շեշտել է կենդանիների համարակալման և հաշվարման համակարգերի ներդրման կարևորությունը: Կողմերը պայմանավորվել են այդ ուղղությամբ քայլեր ձեռնարկել համապատասխան աշխատանքային խմբերի միջոցով: Անդրադարձ է կատարվել նաև գիտական կառույցների միջև, մասնավորապես, սերմնաբուծության ոլորտում համագործակցության զարգացման հարցին: Զննարկվել է նշված ուղղություններով տեխնիկական աջակցության տրամադրման հնարավորությունը:

Հնդկաստանի գյուղատնտեսության նախարարն իր հերթին կարևորել է այցը երկկողմ հարաբերությունների խորացման ու ամրապնդման համար և հույս հայտնել, որ այն կնպաստի արդյունավետ համագործակցության հաստատմանը:

Հանդիպման շրջանակում նախարարները ստորագրել են համաձայնագիր՝ Հայաստանի և Հնդկաստանի գյուղատնտեսության նախարարությունների միջև ագրարային ոլորտում համագործակցության մասին: Համաձայնագրի շրջանակում երկու երկրների գյուղատնտեսության նախարարությունները համագործակցություն կծավալեն բուսաբուծության, գոմշաբուծության և թռչնաբուծության, չորային գոտիներում գյուղատնտեսության կազմակերպման, ոռոգման և ջրի կառավարման համակարգերի ու առաջադեմ տեխնոլոգիաների բնագավառներում փորձի փոխանակման, կաթի արտադրության և վերամշակման, պտղատու ծառերի փոխանակման և այլ առաջնային ուղղություններով:

Հանդիպման ավարտին նախարար Սերգո Կարապետյանը հրավիրել է իր պաշտոնակցին այցելել Հայաստան:

Իրականացվել են նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարի հանդիպումները գյուղտեխնիկայի խոշոր արտադրողների, գինի ներմուծողների, ինչպես նաև հայկական համայնքի ներկայացուցիչների հետ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն ընդունել է «Ֆերմերների ազգային միավորման» (ՖԱՄ) նախագահ Ռոզա Ծառուկյանին և ՖԱՄ նախագահության անդամներին: Հանդիպմանը քննարկվել են Հայաստանում գյուղատնտեսության ոլորտի ներկայիս վիճակին և զարգացմանը վերաբերող մի շարք հարցեր: Անդրադարձ է եղել մեղվաբուծության, թռչնաբուծության, անասնապահության և անասնաբուծության զարգացման հեռանկարներին, ներկայացվել են տարբեր առաջարկություններ: Կառավարության ղեկավարը կարևորել է գյուղատնտեսության նախարարության և ՖԱՄ միջև շարունակական համագործակցությունը և հանձնարարել գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանին՝ ներկայացված առաջարկությունները քննարկման առարկա դարձնել նախարարությունում:

Հովիկ Աբրահամյանն առաջարկել է ՖԱՄ ներկայացուցիչներին մասնագիտական քննարկումներ կազմակերպել արծարծված հարցերի շուրջ և կոնկրետ ծրագրեր ներկայացնել կառավարություն:

* * *

Աժ արտահերթ նիստում գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը ներկայացրել է «Գործունեության իրականացման ծանուցման մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որով ենթադրվում է՝ կխթանվի խաղողի օդինների արտադրությունը:

Ըստ Ռ. Մակարյանի՝ ՀՀ գործող օրենսդրությամբ խաղողի օդինների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար սահմանված տարեկան տուրքի դրույքաչափը կազմում է 15 մլն դրամ, և այդ պատճառով Հայաստանում խաղողի օդի գրեթե չի արտադրվում: Գինու առանձին տեսակների (աղանդերային, կիսաաղանդերային, խերեսային, պորտվեյն, մադերա և այլն) արտադրության տեխնոլոգիայով պահանջվում է դրանց ավելացնել բացառապես խաղողի օդի, մինչդեռ խաղողի օդու բացակայության պատճառով ավելացվում է ցորենի օդի, որն արգելված է ԵՄ և ՌԴ օրենսդրությամբ:

Փոխնախարարը նշել է, որ գինու արտադրությամբ զբաղվող տնտեսավարողները հնարավորություն չեն ունենում օդու արտադրության նպատակով թորելու գինու արտադրության համար ոչ պիտանի գինեյուրթը, վերամշակելու բավականին մեծ ծավալ (շուրջ 25%) կազմող մնացորդները, ինչպես նաև իրականացնելու խաղողի մի շարք սորտերի մթերումներ, որոնք չեն մթերվում գինու և կոնյակի արտադրության նպատակով:

Ռ. Մակարյանի խոսքով՝ օրինագծով միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 % և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրության գործունեության իրականացման ծանուցման շարքում կլրացվի խաղողի օդու արտադրության գործունեության իրականացումը, իսկ տարեկան տուրքի դրույքաչափը կհավասարեցվի այդ խմիչքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար սահմանված տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափին, այսինքն՝ 50 հազար դրամ:

Աջակցության ծրագրեր	Էջ 3
Կոոպերացիա	Էջ 4
Մասնագետի խորհուրդը	Էջ 6

ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանդիպում գյուղատնտեսական արտադրողների և հայկական համայնքի ներկայացուցիչների հետ

Հնդկաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպել է գյուղատնտեսական տեխնիկա մատակարարող, այդ թվում՝ խոշորագույն «Դաշմեշ» և «Շաքթիման» ընկերությունների ներկայացուցիչների հետ: Չրոյցի ընթացքում նախարարը նշել է, որ գյուղատնտեսական կատարմամբ առկա է մեծ պահանջարկ՝ միևնույն ժամանակ կարևորելով արտադրանքի որակի և գների հարցը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են գյուղատնտեսական արտադրությանն ու մատակարարմանն առնչվող մի շարք հարցեր, պայմանավորվածություններ են ձեռք բերվել հետագա համագործակցության շուրջ: Մասնավորապես հնդկական կողմը պատրաստակամություն է հայտնել այցելել Հայաստան՝ հայ ֆերմերների համար գյուղատնտեսական ցուցադրություններ կազմակերպելու, ինչպես նաև տեղում

պահանջարկն ուսումնասիրելու նպատակով: Այնուհետև Հնդկաստանում ՀՀ դեսպանատանը կազմակերպվել է հայկական գինիների համաժողով, որտեղ ներկայացվել են երկու տասնյակից ավելի հայկական կարմիր և սպիտակ գորգի գինիներ: Համաժողովը հրավիրված էին ակտիվորեն խմիչքներ ներմուծող կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միջոցառման ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը համառոտ ներկայացրել է հայ գինեգործության պատմությունն ու ավանդույթները, ինչպես նաև Հայաստանում գինու արտադրության ներկա վիճակը: Նախարարը նաև հրավիրել է ներկաներին այցելել Հայաստան՝ տեղում հայկական գինեգործական արտադրանքին և գինու արտադրության պայմաններին ծանոթանալու համար: Միևնույն ժամանակ նախարարը պատրաստակամություն է հայտնել հնարավորինս աջակցել հնդիկ ներմուծողներին հայ գործըն-

կերների հետ համագործակցության հաստատման ուղղությամբ: Հնդկական գինեգործական ընկերությունների մի շարք ներկայացուցիչներ հայտնել են, որ առաջիկայում կայացվեն Հայաստան՝ հայ մասնագետների հետ գործընկերային հարաբերություններ հաստատելու, փոխգործակցության հնարավոր ուղղությունները, մասնավորապես՝ հայկական գինու արտահանման հնարավորության հարցը քննարկելու նպատակով:

Պաշտոնական այցի շրջանակում կազմակերպվել է նաև հանդիպում Հնդկաստանի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ: Սերգո Կարապետյանը հույս է հայտնել, որ

Հնդկաստանի հայկական համայնքը նույնպես ակտիվորեն կարող է ներգրավվել հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման գործում: Հանդիպման ընթացքում նախարարն անդրադարձել է նաև ՀՀ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող աշխատանքներին, պատասխանել ներկաների հարցերին:



ՍԵՄԻՆԱՐ

Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն

2015 թվականի դեկտեմբերի 15-ին Հայաստանի Հանրապետությունում մեկնարկել է ԵՄ ֆինանսական աջակցությամբ և Ավստրիական գարգացման գործակալության (ԱԶԳ) համաֆինանսավորմամբ իրականացվող Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն (ՕԳԱՆ) ծրագիրը, որի հիմնական նպատակն է օգնել բացահայտել Հայաստանի ներուժը օրգանական գյուղատնտեսության ոլորտում: Ծրագրի տևողությունը երեք տարի է, իսկ ընդհանուր բյուջեն կազմում է 3,3 միլիոն եվրո:

Ծրագրի խոշոր բաղկացուցիչ մասերից է նաև արտադրողներին և վերամշակողներին դրամաշնորհների տեսքով ֆինանսական աջակցության տրամադրումը: Փոքրածավալ դրամաշնորհներ կտրամադրվեն սկսնակ ֆերմերներին, ովքեր սերտիֆիկացման համար աջակցության կարիք կունենան:

Մեծածավալ դրամաշնորհներ կտրամադրվեն արդեն իսկ օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող ֆերմերներին, կոոպերատիվներին և վերամշակողներին՝ արտադրողականության բարձրացման և շուկա մուտք



Ծրագրի հատուկ նպատակներն են՝ Հայաստանում օրգանական արտադրանքի հավելյալ արժեքը ստանալու, ինչպես նաև համապատասխան պետական և մասնավոր հատվածի հաստատությունների արդյունավետության բարձրացումը: ՕԳԱՆ ծրագիրը կաջակցի ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ օրգանական մթերք արտադրողներին և վերամշակողներին համար ստեղծելով միջազգային ստանդարտներին համապատասխան հստակ և կայուն օրենսդրական դաշտ:

Ծրագիրը կօժանդակի օրգանական գյուղատնտեսությանն աջակցող կառույցների վերապատրաստմանը, ինչպես նաև կրթական հաստատությունների համար ուսումնական ծրագրերի մշակմանը:

գործելու հնարավորության ընդլայնման համար:

Վերջերս ծրագրի շրջանակներում անցկացվեց դրամաշնորհի հավակնող մրցութային փաթեթների պատրաստմանն ուղղված սեմինար, որի ընթացքում դրամաշնորհային ծրագրերի ղեկավար Զիրաթյան Գրիգորյանը ներկայացրեց հայտադիմումների լրացման վերաբերյալ պարզաբանումներ, և ներկայացրեց ամենաշատ տրված հարցերի պատասխանները:

Սեմինարին մասնակցում էին ՕԳԱՆ ծրագրի ղեկավար Դևիդ Մուքենհոլթերը, փորձագետ Միսաք Ղաբաթյանը, ծրագրի այլ աշխատակիցներ, ինչպես նաև ֆերմերներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ԳԱՐՆԱՆՆ ԸՆԴՈՍԱԶ

Խորհուրդ են տալիս մասնագետները

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տեղեկացնում է, որ ընթացիկ տարվա փետրվար ամսին գրանցված բազմամյա նորմայից բարձր ջերմաստիճանային ռեժիմի պայմաններում, գյուղատնտեսական որոշ աշխատանքներ անհրաժեշտ է կատարել սովորականից փոքր-ինչ ավելի վաղ ժամկետներում:

Մասնավորապես՝ հյուսիս-արևելքում (Նոյեմբերյանի, Իջևանի, Բերդի, Թումանյանի տարածաշրջաններում) և Սյունիքի հովիտներում (Մեղրու տարածաշրջան) անհրաժեշտ է առաջիկա մի քանի օրերի ընթացքում ավարտել պտղատու ծառատեսակների ետը և շարունակել խաղողի վազերի Ետի աշխատանքները: Արարատյան հարթավայրում պետք է արագացնել կորիզավոր պտղատեսակների ետը և սկսել նաև հնդավորների (խնձորենի, տանձենի, սերկևիլենի) Ետի աշխատանքների կատարումը: Նախալեռնային գոտում խորհուրդ է տրվում սկսել կորիզավոր պտուղների ետը, իսկ 7-10 օր հետո՝ նաև հնդավորների ետը: Պտղատու ծառերի ետը պետք է ավարտել մինչև բողբոջների ուռչելը: Նշված ժամկետում անհրաժեշտ է ծառերի բները մշակել կրակաթով (սպիտակեցնել կրի լուծույթով) և սնկային հիվանդությունների դեմ բուժել պղինձ պարունակող պատրաստուկով:

Փետրվարի վերջերին Արարատ-

յան դաշտում կարելի է սկսել այգեբացը, վազերի բների բացումը, իսկ դրանից մի քանի օր հետո՝ Ետի աշխատանքները (հատկապես մեծ տարածքների վրա): Խորհուրդ է տրվում այգեբացը կատարել օրվա առաջին կեսին (մինչև ժամը 14:00-ն), որպեսզի աչքերի խոնավությունը վերանա, և գիշերային բացասական ջերմաստիճանների դեպքում դրանք չվնասվեն: Արարատյան հարթավայրում, բաց դաշտում, վաղահաս կարտոֆիլի տունկի համար լավագույն ժամկետը կլինի մարտի 5-ից մինչև 20-ը ընկած ժամանակահատվածը, իսկ վաղահաս կաղամբի սածիլումը նպատակահարմար է կատարել մարտի 20-ից հետո: Արարատյան դաշտում բանջարաբուստանային մշակաբույսերի ցանքի և սածիլման աշխատանքները բաց բնահողում պետք է կատարել ապրիլի 25-ից հետո, երբ վերանում է ուշ գարնանային ցրտահարությունների վտանգը: Խորհուրդ է տրվում ընթացիկ տարվա գարնան գյուղատնտեսական աշխատանքները կատարել նշված ժամկետներում՝ առանց ուշացումների ու ավելորդ շտապողականության: Ջերմաստիճանային ռեժիմի հետագա հնարավոր կտրուկ փոփոխությունների դեպքում, ըստ անհրաժեշտության, նախարարության կողմից լրացուցիչ կտրվեն մասնագիտական համապատասխան ցուցումներ ու խորհուրդներ:

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. թ. փետրվարի 23-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունից, ընդհանուր առմամբ, արտահանվել է 10 248 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 5093 տոննայի դիմաց:

Այդ թվում՝ արտահանվել է 3299 տոննա պտուղ և խաղող՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2219 տոննայի դիմաց, 6949 տոննա բանջարեղեն և կարտոֆիլ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 2874 տոննայի դիմաց:

ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ Ավելորդ շտապողականություն պետք չէ ցուցաբերել



ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանը խորհուրդ է տալիս. չնայած հանրապետության տարածքում հաստատված անոմալ տաք եղանակին, որը կծգվի մինչև ամսվա վերջ, գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնելու ավելորդ շտապողականություն չցուցաբերել:

«Սովորաբար, երբ բարձր ջերմաստիճանային ռեժիմ է գրանցվում հատկապես փետրվարին, շատերի մոտ շտապողականություն է սկսում, փորձում են օր առաջ դուրս գալ դաշտ, այգի և գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնել: Մենք միանշանակ խորհուրդ ենք տալիս ավելորդ շտապողականություն հանդես չբերել»,- նշել է նա:

Ըստ նրա՝ հիմա, այս եղանակային պայմաններում պետք է Տավուշի մարզում խաղողի Էտի ձևավորման աշխատանքները սկսել, Արարատյան դաշտում այս օրերին պետք է կորիզավոր տեսակների՝ ծիրանենի, դեղձենիների Էտի աշխատանքներ իրականացնել, իսկ խաղողի այգիներում որևէ միջոցառումներ խորհուրդ չի տրվում անել: «Առաջիկա օրերին ջերմաստիճանի բարձրացման պայմաններում դիտարկումներ կարվեն հողում գրանցված ջերմաստիճանի ֆոնի վրա, և հետագայում ցուցումներ կլինեն այգեբացի ուղղությամբ»,- ասել է փոխնախարարը: Ըստ Գ. Պետրոսյանի՝ իհարկե, ջերմաստիճանի կտրուկ տատանումները ցանկալի չեն, և եթե հետագայում էլ շարունակվի նման բարձր ջերմաստիճանային ռեժիմը, այն կբերի պտղատու ծառերի ավելի վաղ ծաղկման:



«Այս օրերին հանրապետության տարածքում բացված բողբոջներ չունենք բարեբախտաբար: Առաջին ծաղկումը սկսվում է Լոյեմբերյանի տարածաշրջանի ցածրադիր հատվածներում, Մեղրու տարածաշրջանում, բայց դեռևս պտղատու ծառերը հանգստի փուլում են»,- նշել է նա և հավելել, որ այս հանգամանքը բացատրվում է այսպես. չնայած ցերեկային ժամերի բարձր ջերմաստիճանին, գիշերային ժամերին ջերմաստիճանը բացասական է, ինչն էլ ստիպում է ծառերին հարկադրական հանգստի փուլում մնալ: Բայց ջերմաստիճանի կանխատեսումը ցույց է տալիս, որ գիշերային ժամերին էլ տաք ջերմաստիճան կլինի, ինչը մտահոգության առիթ է տալիս: Գառնիկ Պետրոսյանը նշել է, որ ցանքի և բաց դաշտում սածիլացման աշխատանքների մասին ընդհանրապես որևէ խոսք լինել չի կարող:

«Արարատյան դաշտում շուրջ երկու ամիս ունենք վտանգավոր ժամանակահատված, կարող են կտրուկ ջերմաստիճանների անկումներ և գարնանային ցրտահարումներ գրանցվել նույնիսկ ապրիլի 22-23-ին: Իսկ սածիլային աշխատանքները բաց դաշտում պետք է սկսել ապրիլի 25-ից հետո»: Իսկ վաղահաս կարտոֆիլի տունկը, մասնագետի խոսքով, Արարատյան հարթավայրում մարտի սկզբներին է կատարվում. ուստի նա խորհուրդ է տալիս այդ ժամանակահատվածում էլ պատրաստ լինել և կատարել բաց բնահողում:

ԱՉՍԿՅՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԿՏԵՏԵՍՎԻ ԺԱՄԱՆԱԿԸ, ԿԲԱՐԵԼԱՎՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱԿԸ

2015թ. տարեվերջին ՀՀ գյուղատնտեսության նախարարության Բանջարաբուսության և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնը համալրվեց նորագույն տեխնիկայով: Այն հարկացվել է ՄԱԿ-ի Գարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջոցներով՝ «ՀՀ գյուղատնտեսության նախարարության Բանջարաբուսության և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի սերմնաբուծության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում:



Նորագույն սարքավորումները հնարավորություն են ընձեռում արագացնել արտադրական գործընթացները, բարելավել աշխատանքի որակը, ձեռքի աշխատանքը կրճատել շուրջ 80 %-ով: Օդի մղման օգնությամբ մաքրող սարքը, սերմը գտելով տարբեր խառնուրդներից, այն տեղափոխում է արտաքին տեսքը, փայլը վերականգնող մեկ այլ սարքի մեջ: Այսուհետև, ըստ չափերի՝ տեսակավորման նպատակով դրանք առանձնացվում են: Այն հնարավորություն է ընդձեռում հետագայում ապահովել սերմերի ծլունակությունը, ինչպես նաև դաշտերի միատարրությունը: Ձեռք են բերվել նաև սերմերի ախտահանիչ և փաթեթավորող սարքեր: Այդպիսով՝ նորացված տեխնիկական հնարավորություն է տալիս սերմերի հետ կատարել բոլոր այն աշխատանքները, որոնք պետք է տարվեն մինչ վաճառքը: Գիտական կենտրոնի տնօրեն Գայանե Սարգսյանի տեղեկացմամբ, Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակը մինչև տարեվերջ պետք է տրամադրի ֆիտոպտոլոգիայի լաբորատոր սարքավորումներ, որոնց միջոցով սերմերի և սածիլների մեջ ի հայտ կբերվեն կամ կբացահայտվեն հիվանդությունները:

Համաշխարհային բանկի աջակցությամբ պետք է հզորանան նաև գիտական կենտրոնի սածիլների աճեցման հնարավորությունները: Այդ նպատակով կենտրոնին հատկացվել է համապատասխան հոսքագիծ: Այսուհետև, սերմերի ցանքի ժամանակ, բանվորական ուժի փոխարեն պետք է օգտագործվի հոսքագիծը: «Սարքի օգնությամբ պատրաստված հողախառնուրդը լցվում է պոլիէթիլենային խոռոչիկների մեջ, որից հետո, դարձյալ սարքի միջոցով, դրանց մեջ ցանվում են սերմերը: Հոսքագիծը հնարավորություն է տալիս մեկ օրում կատարել այնքան ցանք, որքան բանվորական ուժի օգտագործման դեպքում՝ մեկ ամսում: Այդպիսով՝ կավելանա նաև որակյալ սածիլների ար-

տադրության ծավալը, որոնց պահանջարկը տարեցտարի մեծանում է մեր հանրապետությունում», - պատմում է տիկին Սարգսյանը:

Սածիլների աճեցման նպատակով գիտական կենտրոնում սերմերի ցանքի աշխատանքները սկսվում են դեռևս հունվարից, քանի որ դրանք տրամադրվում են ոչ միայն բաց դաշտի, այլև թաղանթապատ և այլ տեսակի ջերմոցների համար: «Հողախառնուրդի պատրաստման համար օգտագործում ենք տորֆ, կենսահումուս և պեռլիտ: Խորհուրդ կտայի, որպեսզի այն ֆերմերները, ովքեր գերադասում են իրենց աճեցնել սածիլները, հողախառնուրդում անպայման օգտագործեն հիշյալ բաղադրիչները: Հետագայում պետք է կիրառել նաև օրգանական պարարտանյութեր, հողը մուգել ոչ միայն ազոտական, այլև ֆոսֆորական պարարտանյութերով, որը նպաստում է սածիլների արմատային համակարգի լիարժեք ձևավորմանը», - ասում է Գայանե Սարգսյանը:

Շաղացան սածիլների ստացման նպատակով ցանքի աշխատանքները կսկսվեն մարտի վերջից: Սածիլներ կաճեցվեն նաև տարվա մյուս ամիսներին, որպեսզի մշտապես հնարավոր լինի ապահովել ֆերմերների պահանջարկը: Տիկին Սարգսյանի կարծիքով, տարեցտարի ավելանում է տեղական թե սերմերի, և թե սածիլների պահանջար-



կը, ընդլայնվում՝ ցանքի աշխարհագրությունը: Գիտական կենտրոնում աճեցված սածիլներից ու ստացված սերմերից օգտվում են նաև հանրապետության լեռնային և նախալեռնային գոտու ֆերմերները: Նախորդ տարի Գորիսում ցանվել են լուլիկի վաղահաս սորտի սերմեր, որոնք ապահովել են բարձր բերք:

Ֆերմերներն այսօր գերադասում են սածիլներն աճեցնել ոչ թե սեփական տնտեսություններում, այլ դրանք ձեռք բերել մասնագիտացված կազմակերպություններից: Արդյունքում՝ նրանք կխուսափեն անորակ սածիլների օգտագործումից, որը հետագայում իր բացասական ազդեցությունը կարող է ունենալ նաև բերքատվության վրա:

Ի դեպ, Համաշխարհային բանկի աջակցությամբ, «CARMAC-2» ծրագրի շրջանակներում, այս օրերին կատարվում են նաև գիտական կենտրոնի ջերմատների նորոգման աշխատանքները:

Նեյի Սահակյան

ԿՈՌՊԵՐԱՑԻԱ

ԿՈՌՊԵՐԱՑԻԱԿԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ

Աջաջուրը Տավուշի մարզի հետաքրքիր ավանդույթներ ունեցող գյուղերից է: Ի տարբերություն շատ համայնքների, այստեղ սիրով են ընդունում ամեն մի նորույթ ու նորարարություն, փորձարկում ու ներդրում նորագույն տեխնոլոգիաները, գնահատում ու արժևորում են գաղափարները: Այսպես, գրեթե առանց «խոչընդոտների» 2012թ.-ին, գյուղում ձևավորվեց «Աջաջուր համայնքի արտոգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվը:

Հիմնադիր ժողովի 145 մասնակիցները հետագայում դարձան կոոպերատիվի անդամներ: Նրանք հիմնականում անասնապահությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներ են: Գյուղապետ Կամո Ղալթաղյանի կարծիքով, գյուղի բնակիչմայրական պայմանները լիարժեք հնարավորություն են ընձեռում զբաղվել թե՛ անասնապահությամբ, և թե՛ հողագործությամբ: Կլիման նպաստավոր է նաև ջերմոցային տնտեսությունների զարգացման առումով, սակայն դրա համար ֆինանսական միջոցներ ու ներդրումներ են հարկավոր: Ավելի քան 1200 տնտեսություն և 4500 բնակիչ ունեցող այս գյուղից արտագնա աշխատանքի մեկնողների թիվը փոքր է: Մարդիկ, հատկապես կոոպերատիվի ստեղծումից հետո, գերադասում են մնալ հայրենի գյուղում, իրենց հողը մշակել, հայրենի տունը շենսցնել:

Վերջին շրջանում 30 %-ով ավելացել է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը, քանի որ կոոպերատիվին տրամադրված տեխնիկան լիովին հնարավորություն է ընձեռում անկորուստ և ժամանակին կազմակերպել խոտի բերքահավաքն ու կերի կուտակումը: «Բերքահավաքի աշխատանքներն ավարտվում են մինչև օգոստոսի 15-ը: Աշխատանքների ժամանակին կատարման արդյունքում բարելավվել է նաև կերի որակը: Ձմռան ամիսներին կենդանիները ստանում են լիարժեք կերեր: Չարգացման անասնապահական ուղղվածություն ունեցող մեր գյուղում կոոպերացիան նպաստեց, որպեսզի կատարվող ծառայությունների դիմաց կոոպերատիվի անդամների ծախսերը կրճատվեն շուրջ 30%-ով», - ասում է գյուղապետը:

Ստացված եկամուտների հաշվին կոոպերատիվը լրացուցիչ գնել է և մեկ տրակտոր: Քայլեր են արվում առաջիկայում կոմբայնի ձեռք բերման ուղղությամբ: «Կոոպերատիվի ստեղծումից հետո շուրջ 20-30%-ով ավելացել են նաև մշակվող հողատարածքները: Կոոպերատիվի ունեցած գյուղատնտեսական տեխնիկան և սարքավորումները թույլ են տալիս շարունակել ցանքատարածքների ավելացման գործընթացը: Կոոպերատիվն ունի ժամանակակից մեքենատրակտորային հավաքակայան, որի ծառայություններից օգտվում են նաև համայնքի մյուս բնակիչները», - նշում է կոոպերատիվի նախագահ Աշոտ Մաացականյանը: Նա մասնագիտությամբ մեխանիկատոր է, ուստի տեխնիկական շատ աշխատանքներ անձամբ ինքն է կատարում:

Անդրանիկ Ղալթաղյանը, ով գյուղի խոշոր հողատարածքներ մշակող ֆերմերներից է, միաժամանակ անդամակցում է կոոպերատիվին՝ զբաղվելով նաև

խոզաբուծությամբ: Աջաջրի անջրդի տարածքներից բարձր բերք է ստանում, քանի որ սեզոնային աշխատանքները կատարելու համար այլևս տեխնիկայի հետ կապված խնդիրներ չունեն: «Յողից եկամուտ ստանալու լավագույն եղանակը մշակության և բերքահավաքի աշխատանքների ժամանակին կատարումն է, դրանց ընթացքին հետևողականորեն հետևելը: Կոոպերատիվի առավելություններից մեկն էլ այն է, որ բոլոր աշխատանքները կատարվում են՝ ըստ հերթականության և ժամանակին», - եզրահանգում է Անդրանիկը:

Նիկոլայ Մաացականյանը կոոպերատիվի ամենաերիտասարդ անդամն է՝ 22 տարեկան: Մասնագիտությամբ մեխանիկատոր է, և չնայած երիտասարդ տարիքին, իր նվիրված աշխատանքի շնորհիվ, արդեն շահել է կոոպերատիվի անդամների վստահությունը: Գյուղտեխնիկայով ծառայություններն առաջնահերթորեն կատարում են կոոպերատիվի անդամների հողատարածքներում: Նիկոլայը որոշել է ընդունվել

և իր դրական արդյունքներն ակնհայտ են: Օրինակ՝ Աշոտ Մաացականյանը անասնապահության զարգացումը սկսել է մեկ կովից, այժմ խնամում է 9 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, որից 5-ը կովեր են:


«Մարզում, սկսած 2011 թ.-ից, ստեղծվել են արտոգտագործողների սպառողական 25 միավորումներ: Ծրագրում ընդգրկվել է 6 համայնք Իջևանի, Նույնքան՝ Նոյեմբերյանի և 13 համայնք՝ Բերդի տարածաշրջաններից: Կոոպերատիվները ստեղծվել են «Արտոների կառավարման և անասնապահության զարգացման» բաղադրիչով: Տասնեկ համայնքներ, իրենց եկամուտների հաշվին, լրացուցիչ ձեռք են բերել ևս մեկական տրակտոր», - պատմում է Տավուշի մարզային աջակցության թիմի համակարգող Պավել Յուցուլյանը:

Կոոպերատիվները Տավուշի մարզում ստեղծվել են հիմնականում սահմանամերձ գյուղերում: Եվ դա ունի իր դրական կողմը, քանի որ այդպիսով բնակիչները մնում են գյուղում, զբաղվում են անասնապահությամբ: Ի դեպ, կոոպերատիվներում ընդգրկված անդամների մոտ նկատելի է եկամուտների աճ: «Շատ կարևոր է, որ կոոպերատիվները կազմակերպում են արտոների հերթափոխային արածեցում: Խոտածածկի 8 սմ-ից պակասելու դեպքում, կենդանիներին տեղափոխում են այլ արտավայրեր: Այսօր «Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի «Արտոների կառավարումը և անասնապահության զարգացումը» ամենախոշոր բաղադրիչն է՝ վարելահողերի օգտագործման ծավալները մեծացնելու առումով: Ծրագրի իրականացման արդյունքներն անսխաղեպ են», - հավելում է Պավել Յուցուլյանը:

Տավուշի մարզի արտոներն աչքի են ընկնում մեծ արդյունավետությամբ (դրանք հիմնականում տեղակայված են ալպյան գոտիներում), բուսածածկի բազմազանությամբ և բարձր որակով: Դրա շնորհիվ արտադրվում է համային լավագույն հատկանիշներով միս և կաթ: Կենդանիները արտավայրերում կերակրվում են մարտից մինչև նոյեմբեր ամիսները: Արդյունքում՝ իջնում է արտադրված կաթի

և մսի ինքնարժեքը, իսկ արտադրյալի պահվածքի պայմաններում էլ ավելի է բարելավվում ու բարձրանում վերջիններիս որակը:

Իջևանի տարածաշրջանի ծրագրում ընդգրկված Լուսածոր, Աջաջուր, Ներքին Ծաղկավան, Կիրանց և Սարիգյուղ համայնքներում ստեղծված կոոպերատիվները շարունակում են իրենց բնականոն ընթացքը՝ ապահովելով տնտեսական աճ: Նշված 6 համայնքները միասին ունեն ավելի քան 7000 հա արտավայրեր (յուրաքանչյուրի տարածքը կազմում է շուրջ 1000 հա), որոնք շահագործվում են արդյունավետորեն, միաժամանակ՝ պայմաններ ապահովելով նաև հետագա օգտագործման համար: Այս առումով, ծրագիրը Տավուշի մարզում, և մասնավորապես՝ Իջևանի տարածաշրջանում, կարելի է համոզված ասել, իրոք, հաջողվել է:



ՀԱՄԱՐ, ձեռք բերել գյուղատնտեսի մասնագիտություն՝ խորացնելով գիտելիքները: Չուզահեռաբար որոշել է զբաղվել նաև մեղվաբուծությամբ, որի զարգացման համար ևս առկա են անհրաժեշտ բոլոր պայմանները:

Աջաջրում յուրաքանչյուր տնտեսություն խնամում է, միջին հաշվով, 30-40 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի: Հեռագնա արտավայրերի ջրարբիացումից հետո (տեղադրվել են 3 խմոցներ) բարձրացել է կենդանիների մթերատվությունը: Այժմ էլ՝ մթերման կետերի և վերամշակման արտադրամասերի անհրաժեշտությունն է ծագել: Կաթն առայժմ հանձնում են վերամշակող ընկերություններին, միսը՝ վերավաճառողներին: «Կոոպերատիվի կարիքը կար, ճիշտ էր քայլ կատարելը», - հավելում է կոոպերատիվի նախագահը: Ի դեպ սպառողական կոոպերատիվին անդամակցելու ցանկություն ունեցողների թիվը գնալով ավելանում է, քա-

ՉՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄԻՏՈՒՄ ՈՒՆԻ

«Չրագործությունը վերամշակող արդյունաբերության կարևոր ուղղություններից է, որի զարգացման համար Հայաստանում առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները: Կարևորը՝ պատրաստի արտադրանքի իրացումն է, իսկ այդ խնդիրը լիարժեք կարող է լուծել ռուսական շուկան: Հայաստանյան չրագործների առջև Ռուսաստանն այսօր լայն դռներ է բացել, մնում է՝ կարողանալ բավարարել պահանջվող քանակությունը», - ասում է «Սուրեն-Անի» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն Վլադիմիր Գալստյանը: Ռուսական շուկային հիմնականում չիր էին մատակարարում Ուզ-

բեկստանը և Թուրքիան: Սակայն վերջինիս առջև դրված սահմանափակումներից հետո, այդ բացը պետք է լրացնեն



չիր արտադրող այլ երկրները, մասնավորապես՝ Հայաստանը: «Սուրեն-Անի» ՍՊԸ-ը մասնագիտացել է ոչ միայն չրի պատրաստման, այլև էլեկտրական չորանոցի արտադրության գծով: Սարքի գյուտարարը մասնագիտությամբ ինժեներ-տնտեսագետ և տեխնիկ-տեխնոլոգ Վլադիմիր Գալստյանն է: Նրա տեղեկացմամբ, գյուղը պատենդավոր-

ված է, և պաշտպանված է հեղինակային իրավունքը: «Սարքը, էլեկտրական չորանոցների համեմատությամբ, հոսանք քիչ է ծախսում: Այսպես, օրինակ, կորեական չորանոցները ծախսում են 15-17 կվտ/ժամ էլեկտրաէներգիա, իսկ իմ ստեղծած սարքը՝ 6 կվտ/ժամ», - ասում է գյուտարարը: Բացի այդ, հայկական սարքը երկու անգամ էժան է կորեականից:

Ընկերությունն արտադրում է տեխնոլոգիական առանձնահատկություններով աչքի ընկնող տարբեր տարողությունների չորանոցներ՝ սկսած 120 կգ-ից մինչև 1,5 տոննա հզորությամբ: Վլադիմիր Գալստյանը մշակել է նաև տարբեր մրգատեսակներից պատրաստվող չրերի տեխնոլոգիան, որը սարքի հետ, հատկացվում է գնորդին: Սարքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ավելի քան 3 ժամով կրճատվում է չրի պատրաստման

աշխատաժամանակը:

Ինչ վերաբերում է «Սուրեն-Անի» ՍՊԸ-ի արտադրած չրերին, ապա տնօրենի գնահատմամբ, դրանք աչքի են ընկնում համային լավագույն հատկանիշներով, փափկությամբ, ապրանքային տեսքով: Հումքը ձեռք են բերում այգետերերից՝ նախապես կնքված պայմանագրերի հիման վրա: Մթերում են հիմնականում կեռաս, սալոր, ծիրան, դեղձ, սեխ, լոլիկ և այլն: Արտադրանքի 90 %-ը առաքվում է ռուսական շուկա՝ ապահովելով վերջինիս կողմից պահանջվող բոլոր չափորոշիչները: Հայկական չրատեսակներով հետաքրքրված են նաև Արաբական Միացյալ Էմիրությունների մասնավոր ընկերությունները: Հավանելով հայկական չրի համն ու որակը՝ վերջիններս պատրաստ են ներդրումներ կատարել, հիմնել համատեղ ձեռնարկություններ, լուծել իրացման խնդիրը:

ՍՆՆԴԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ԶԵՎԱՓՈՒՄՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐ

Վերջին տարիներին գենետիկորեն մոդիֆիկացված մթերքների թիվը սկսել է աճել: Գենետիկորեն մոդիֆիկացված են կոչվում այն մթերքները, որոնք արեղծվել են ոչ թե բնական ճանապարհով, այլ՝ մարդու միջամտության մշտնրիկ:

ԳՄՕ պարունակող սննդամթերքների արտադրության ծավալների մեծացումը կապված է համամարդկային առաջնային հիմնախնդիրներից մեկի՝ բնակչության պարենային ապահովվածության հետ: Երկրագնդի բնակչությունն աստիճանաբար ավելանում է, և անհրաժեշտություն է առաջանում մարդկանց ապահովել պարենով, սակայն գոյություն ունեցող բնական պաշարները չեն բավականացնում: ԳՄՕ-ն օրգանիզմ է, որի գենետիկ արհեստականորեն փոփոխվել է՝ գենային ինժե-



ներհայի մեթոդներով: Գենային փոփոխությունները կատարվում են գիտական և տնտեսական նպատակներով: Ի տարբերություն բնական կամ արհեստական մուտացիաների ժամանակ առաջացող պատահական փոփոխությունների՝ գենային փոփոխությունն ունի խիստ նպատակային ուղղվածություն:

Գյուղատնտեսության մեջ գենային ինժեներիայի մեթոդները կիրառվում են նոր՝ անբարենպաստ պայմաններին ավելի դիմացկուն բուսատեսակների ստացման համար, որոնք կունենան ավելի լավ համ, ավելի արագ կաճեն ու ավելի շատ բերք կտան: Ստեղծվում են նաև կենդանիների նոր տեսակներ, որոնք նույնպես հարմարեցվում են մարդուն և նրա գործունեությանը: Սակայն դեռևս ապացուցված չէ ԳՄՕ պարունակող սննդամթերքի անվտանգությունը մարդու համար: ԳՄՕ պարունակող սննդամթերքն արտաբնական, ինչպես նաև համային հատկանիշներով, ոչնչով չի տարբերվում բնականից: ԳՄՕ-ների քրոմոսոմներն իրենց մեջ կրում են ուրիշ բույսերի և կենդանիների վնասակար մասնիկներ և՛ ոչ միայն:

1994 թ. ամերիկյան խանութներում հայտնվեց առաջին ԳՄՕ-բանջարեղենը՝ լոլիկը, որը չէր «վախենում» փոխադրումներից և երկար ժամանակ պահպանում էր իր ապրանքային տեսքը: Արտաքինից այն սովորական լոլիկ է, սակայն բազմաճյուղ է անսովոր արագությամբ, կայուն է ցածր ջերմաստիճանների և հիվանդությունների նկատմամբ:

Գենային ինժեներիայի հաջորդ ձեռքբերումը կարտոֆիլն է, որին կոլորադոյան բզեզն անգամ չի կարող վնասել: Խնդիրն այն է, որ կարտոֆիլի գենոմի մեջ ներկցված է վնասատուների համար մահացու թունավոր նյութ արտադրող բակտերիայի գեն: Սակայն գիտնականները չէին մտածել կարտոֆիլի վրա նստող այլ միջատների մա-

սին և զարմացած էին, երբ սկսեցին ոչնչանալ թիթեռները, գատիկները և նույնիսկ՝ մեղուները:

Դրանց ոչնչացման հետևանքով կսկսեին ոչնչանալ նաև թռչունները, որոնք կգրկվեին իրենց հիմնական կերից՝ միջատներից: Այդպիսով՝ կխախտվի կենսաբանական հավասարակշռությունը, որը բնությունը ստեղծել է միլիարդավոր տարիների ընթացքում:

ԳՄՕ պարունակող սննդամթերքը մարդկանց օրգանիզմում անդամալի փոփոխությունների է հանգեցնում, առաջացնում է վտանգավոր ալերգիաներ, սննդային թունավորումներ, մուտացիաներ, դիմադրողականություն՝ հակաբիոտիկների դեմ և այլն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որքան շատ են օգտագործում ԳՄՕ, այնքան մեծ է արյան մեջ չարորակ գոյացությունների, աղետամոլոսային տրակտի և նյարդային համակարգի ախտահարման վտանգը:

ԳՄՕ-ների դեմ պայքարող գիտնականները պնդում են, որ դրանք քաղցկեղածին են, ծերացնում են մարդու օրգանիզմը: Մյուս կողմից՝ այն օգտագործվում է բժշկության մեջ, և ամբողջ աշխարհում ինսուլինի 90 տոկոսը պատրաստված է գենետիկորեն վերափոխված օրգանիզմներից:

ԳՄՕ-ի հայտնվելը տարբեր երկրներում իշխանություններին առաջին հերթին սննդի անվտանգության առումով, բարդ խնդրի առջև կանգնեցրեց:

ԳՄՕ մթերքի օգտագործման հարցը մնում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱԶԿ) մանդատի մեջ: Այնուամենայնիվ, ներկայում ԱԶԿ-ն միանշանակ պատասխան չի տվել, թե գենետիկորեն ձևափոխված արտադրանքը մարդու համար ռիսկի գործոն համարվում է, թե ոչ: Ամեն դեպքում, ԱԶԿ-ն պաշտոնապես հայտարարել է, որ գենետիկայի մեթոդների օգտագործումն ընդունում է միայն բուժական նպատակներով և բացառում է մարդու կողմից բնությանը միջամտելը, ինչը կարող է հետագա հետևանքներ ունենալ:

Հայաստանի Հանրապետություն ԳՄՕ-ների ներկրումը սկսեց աճել 90-ական թվականներին, հատկապես մարդասիրական օգնության խողովակով: Այդպիսի առաջին մթերքներից էր սերմացու կարտոֆիլը: Այնուհետև Հայաստան ներկրված ԳՄՕ մթերքներին միացան տոմատի մածուկները, արագ աճող ծառերի տնկիները/բարդի/, պահածոյացված եգիպտացորենը, օսլան և այլն: Այսինքն, հայկական շուկան ԳՄՕ-ների ներխուժմանն անպաշտպան գտնվեց:

Ելնելով 21-րդ դարի համաշխարհային հիմնախնդիրներից, ինչպես նաև տնտեսական հարցերից՝ կարելի է եզրակացնել, որ գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի արտադրությունը հնարավոր չէ կասեցնել, ինչպես նաև՝ ամբողջովին վերահսկել: Եվ չնայած, որ ԳՄՕ պարունակող սննդամթերքի բացասական ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա դեռ ամբողջովին ապացուցված չէ, սակայն անհրաժեշտ է հնարավորինս խուսափել դրանցից, քանի որ նրա անվտանգությունը ևս ապացուցված չէ:

Ա. Խալաթյան
Ռ. Հովհաննիսյան
Կոտայքի ԳԱՄԿ

ՀԱՍՍՅՆՔԱՅԻՆ

ԳՅՈՒՂԱՊԵՏԸ ՊԵՏՔ Է ՀՈԳՈՎ, ՍՐՏՈՎ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՏ ԼԻՆԻ

Արարաթի մարզի Ռանչպար գյուղում վերջին տարիներին լայն թափով զարգանում են ջերմոցային փոփոխությունները: Գյուղացին ջերմոցային բանջարեղենի իրացման հետ կապված խնդիրներ չի ունենում: Տեկում են հիմնականում վաղահաս կաղամբ, կարտոֆիլ, որոնք Երևանի շուկաներ են հասցվում մայիս ամսին: Որոշ փոփոխություններ ունեն մշտական գնորդներ, ովքեր բերքը գնում են հենց հողամասից: Գյուղացիներն առանց դժվարության, իրացնում են նաև ջերմոցներում աճեցված վարունգը, լոլիկը, փակդեղը, սմբուկը, կանաչեղենը և բանջարաբուսության այլ մշակաբույսեր: Այսինքն ռանչպարցին կարողանում է ճիշտ կազմակերպել արտադրությունը և եկամուտ ստանալ:



Թեև տարածքին բնորոշ է սակավաջրությունը, սակայն խորքային հորերի ճիշտ շահագործման արդյունքում, գյուղում թե խմելու, և թե ոռոգման ջրերի խնդիրը կարգավորված է: Գյուղացիներն օգտվում են 13 ինքնահոս շատրվանող խորքային հորերից, գյուղը խմելու ջրի այլ աղբյուրներ չունի: Գյուղապետ Մանուկ Օհանյանի տեղեկացմամբ, չօգտագործվող խորքային հորերը, ջրի խնայողության նպատակով, ժամանակավորապես փակվել են և կապարակնալվել: Դրանք կբացվեն գարնանը՝ ոռոգման տարեշրջանի սկսվելուն զուգահեռ: Ռանչպարցիները գրեթե ամբողջությամբ մշակում են նաև տնամերձ և սեփականաշնորհված հողատարածքները, ցանում են ցորեն, գարի, առվույտ, կորեկ և կերային այլ մշակաբույսեր, որոնք բարձր բերք են ապահովում: Գյուղը հարուստ է նաև պտղատու ծառատեսակներով, բարձր բերք են ապահովում հատկապես ծիրանենին, կեռասենին, թթենին, ընկուզենին, իսկ ավազուտ և կավային հողերից ստացվում է նաև խաղողի բարձր և որակյալ բերք: «Որոշել ենք նաև այստեղ աճեցնել, այդ նպատակով առաջիկայում Իրանի Իսլամական Հանրապետությունից տնկիներ ենք ներկրելու: Պիստակի ծառերը հատկապես լավ են աճում աղոտ հողերում, դրանք կարող են դիմակայել մինչև -40 C° ցրտին: Սկզբում փորձնական կտնկելք 20 տնկի, այնուհետև, արդյունքները գնահատելուց և լավ ցուցանիշներ ստանալուց հետո, կկազմակերպենք զանգվածային տունկ», - ասում է գյուղապետը:

Ռանչպարում զբաղվում են նաև անասնապահությամբ, գյուղում առկա է 480 գլուխ խոշոր, 330 գլուխ մանր եղջերավոր կենդանի, շուրջ 2000 թռչուն: Զբաղվում են նաև ապահովող խոզաբուծությամբ: Գյուղապետ Մանուկ Օհանյանի տեղեկացմամբ, արդեն ձևավորվել են գյուղացիական փոքր տնտեսություններ, որոնցում աստիճանաբար ավելացվում է գլխաբանակը: Ռանչպարում օրական արտադրվում է 1-1,5 տոննա կաթ, որը մթերում են վերամշակող ընկերությունները: Գյուղում գործում է նաև ձկնաբուծական 3 տնտեսություն: «Գյուղացիները Ռանչպարում, կարելի է ասել, բարեկեցիկ կյանքով են ապրում: Կարողանում են ճիշտ և ժամանակին կազմակերպել գյուղատնտեսական աշխատանքները, արդյունք ստանալ: Ռանչպարից նույնիսկ կանաչի է արտահանվում ՌԴ: Արդյունքում՝ բնակիչները գոհունակ են, հարկերը վճարում են ժամանակին: Գյուղի միակ խնդիրն այսօր կապույտ վառելիքի բացակայությունն է, որն անհապաղ պետք է լուծում գտնի», - իր մտահոգությունն է կիսում գյուղապետը և ապա հավելում, որ գյուղը վերաբնակեցված է Բաքվից բռնազաղթվածներով, ովքեր փոխանակել են իրենց բնակարանները Ռանչպարում ապրող աղբյուրներից:

րի հետ: Ուստի, նրանց համար պետք է ապահովել կենցաղային նվազագույն պայմանները, որպեսզի չհեռանան գյուղից: «Արաքսի ափին տեղակայված և Թուրքիային սահմանակից այս գյուղը (Ռանչպարից մինչև Արաքս գետը՝ 500 մ է), որում նաև փոքր թվով եզրիներ են բնակվում, հասկանալի պատճառներով, չլուծված խնդիրներ չպետք է ունենա: Գազիֆիկացման խնդրի կարգավորման համար գյուղապետարանը, համաֆինանսավորման դեպքում, պատրաստ է կատարել նաև իր ներդրումները, միայն թե այդ ուղղությամբ որոշակի ծրագրեր իրականացվի», - նշում է Մանուկ Օհանյանը: Այդ նպատակով գյուղապետը դիմել է տարբեր կազմակերպությունների. առայժմ սպասում են:

Գյուղապետարանի միջոցներով նորոգվել են գյուղամիջյան ճանապարհները: Ձմռան ամիսներին, առանց ուշացումների, կատարվել են ձյան մաքրման աշխատանքները, ինչի շնորհիվ, նույնիսկ ամենաձնառատ օրերին, երթևեկության հետ կապված խնդիրներ չեն առաջացել: «Գյուղապետը պետք է հոգով, սրտով ժողովրդի հետ լինի: Ես երբեք չեմ կարող անտարբեր լինել ինձ ներկայացված որևէ խնդրի նկատմամբ, Ռանչպարում ապրող յուրաքանչյուր բնակչի հոգսը նաև իմ հոգսն է», - իր խոսքը եզրափակում է գյուղապետը:

Գյուղի ջերմատներում արդեն սկսվել են մշակության աշխատանքները: Այս օրերին զբաղված են սածիլների աճեցմամբ: Ի դեպ, ջերմատներում նաև նոր տեխնոլոգիաներ են կիրառվում, շուտով մի ֆերմերի կողմից, առայժմ փորձնական, կենտրոնի ջերմատեկուսի թաղանթով ջերմատան ամերիկյան մոդուլ: Գոհացնող արդյունքներ ստանալու դեպքում այն կներդրվի նաև այլ տնտեսություններում: Ջերմատան այս տարբերակը արդյունավետ է նրանով, որ տաքացման համար էներգիայի լուսաբանության համար չեն պահանջվում: Բացի այդ, ջերմոցի շահագործումը, այս եղանակով, հնարավոր է իրականացնել տարվա բոլոր ամիսներին: Ռանչպարում արևային օրերը շատ են, ինչը ևս նպաստավոր պայման է ջերմատային տնտեսությունների զարգացման համար:

Ինչ վերաբերում է հանրապետությունում գյուղատնտեսության զարգացմանը, ապա Մանուկ Օհանյանի կարծիքով, կարելի է լուրջ հաջողությունների հասնել և առաջընթաց ունենալ, եթե տրամադրվեն արտոնյալ, ցածր տոկոսադրույքներով և երկարաժամկետ վարկեր, որպեսզի հնարավոր լինի արտադրություն կազմակերպել, եկամուտ ստանալ, ընդարձակել տնտեսությունը, նորարարական առաջավոր ծրագրեր իրականացնել և ներդնել նոր տեխնոլոգիաներ:

Նեյի Սահակյան

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԲԱՆՋԱՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍՆԵՐԻ ՍԱԾԻԼՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄ

/Բաց և ծածկած գրունտի համար/

Բաց գրունտի համար

Սերմերի նախապատրաստում ցանքին

Ցանքից առաջ անհրաժեշտ է սերմերը մաքրել, տեսակավորել և ախտահանել:

Ցանքից առաջ, ծլման ընթացքն արագացնելու և համերաշխ ծլունակություն ապահովելու համար խորհուրդ է տրվում սերմերը 12 ժամ տևողությամբ թրջել միկրոտարրերի լուծույթում՝ բորաթթու-0.02, ծծմբաթթվային մանգան-0.05, ծծմբաթթվային ցինկ-0.05,



Վարունգի սածիլը առաջին իսկական տերևի փուլում

մոլիբդենաթթվային ամոնիում-0.01, ծծմբաթթվային պղինձ-0.05, ծծմբաթթվային երկաթ-0.05, կալիումի յոդատ 0.025%: Լուծույթի ջերմաստիճանը պահպանել 22-24°C: Սերմերի չոր զանգվածի և լուծույթի հարաբերությունը՝ 1:3-4: Թրջելուց հետո սերմերը չորացնել, նոր միայն ցանել: Նույն բաղադրությամբ լուծույթն առաջարկվում է կիրառել նաև բույսերի արտաարմատային սնուցման համար՝ 2-3 տերև հասկում:

Սերմերի նախացանքային մշակման համար կարելի կիրառել նաև կեն-

սապատրաստուկներ, մասնավորապես՝ հիդրոգումատ, նագրո և այլն:

Ցանքի և տնկման ժամկետները

Բանջարային մշակաբույսերի ցանքերն անհրաժեշտ է կատարել Արարատյան հարթավայրի պայմաններում՝ արևային ջերմոցներում՝ մարտի 10-15-ը, իսկ սածիլումը՝ ապրիլի 25-ից մինչև մայիսի 10-ը: Նախալեռնային շրջաններում ցանքը կատարել արևային ջերմոցներում՝ ապրիլի առաջին տասնօրյակում, իսկ սածիլումը՝ հունիսի 1-ից մինչև 15-ը:

Սածիլների աճեցման եղանակները


Բույսերը կարելի է աճեցնել բնական և սածիլային եղանակներով: Սածիլային եղանակը երկարացնում է բույսերի վեգետացիայի շրջանը, նպաստում բերքի ավելի վաղ ստացմանը: Սածիլի որակը էականորեն ազդում է բերքի կազմակերպման ժամկետների, բերքատվության և բերքի որակի վրա, քանի որ սածիլային շրջանում են ձևավորվում այն ցողունները, որոնց բողբոջներն իրենց վրա կրելու են բերքի հիմնական մասը (50-60%):

Ջերմոցներում սածիլների աճեցման եղանակները.

Սածիլների մշակությունն ավանդական եղանակով: Սերմերի ցանքը ջերմոցներում կատարվում է բնային կամ գծային եղանակով: Այդ նպատակով օգտագործում են համապատասխան մարզոցներ: Սերմերը ցանել մարզոցներից առաջացած բների մեջ կամ գծերի երկարությամբ, վրայից ծածկել

մաղած տորֆի կամ հողախառնուրդի 2 սմ բարակ շերտով և ջրել շատ մանր անցքեր ունեցող ցնցուղով: Մեկ քառակուսի մետրի վրա ցանվում է 8-10 գ սերմ: Բնային ցանքի դեպքում կարելի է ստանալ 450-650, իսկ գծայինի դեպքում՝ 650-850 հատ սածիլ: Ցանքից հետո ջերմոցները ծածկել ապակե շրջանակներով, վրայից փակել պոլիէթիլենային թաղանթով և հնարավորության դեպքում նաև բամբակե գործվածքով:

Մինչև ծլելը՝ ցանքից 5-6 օր հետո ջրել (ծլաջուր տալ): Ջերմոցները չբացել մինչև ծլելը, որից հետո հեռացնել



Պոլիէթիլենային խոռոչիկներ

վել վաղ ու բարձր բերք ապահովելու համար բարձրորակ սածիլներ կարելի է աճեցնել տորֆաբուսահողային թաղանթներում՝ օգտագործելով պոլիէթիլենային խոռոչիկներ: Ցանքը կատարել 5x5x5 սմ սնման մակերես ունեցող խոռոչիկների մեջ: Որպես հողախառնուրդ կարելի է օգտագործել՝ 3 մաս տորֆ, 1 մաս կենսահումուս, կամ 4 մաս տորֆ, 4 մաս ճմահող, 2 մաս կենսահումուս:

Նախքան ցանքը խոռոչիկները լավ ջրվում են սննդարար լուծույթով, յուրաքանչյուր խոռոչիկում դրվում է 1 հատ սերմ: Ցանքից հետո սերմերը ծածկվում են տորֆի կամ հողախառնուր-

դի բարակ շերտով և պոլիէթիլենային թաղանթով՝ հավասարաչափ ծլելու համար: Խոռոչիկները տեղադրվում են հողի վրա. այն պետք է լինի հնարավորին չափ հարթ և ծածկված սպիտակ պոլիէթիլենային թաղանթով, որպեսզի արմատները գերծ մասն հողի մեջ թափանցելուց և հողի հիվանդություններից: Ծլման շրջանում պահպանել խոնավությունը:

Սերմերը ծլելուց (ծկտելուց) անմիջապես հետո հեռացնել պոլիէթիլենային թաղանթը, որպեսզի չայրվեն ծիլերը և ջրել սննդարար լուծույթով:

57

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑՆՈՂ ԷՏ

Ժամանակի ընթացքում, խանգարվում է բույսերի աճի ու բերքատվության պրոցեսների համամասնությունը, արդյունքում ընկնում է ծառերի բերքատվությունը: Իրավիճակը կարգավորելու և ծառերը երիտասարդացնելու համար կիրառվում է էտը: Նկատի ունենալով ծառերի աճն ու հասակը՝ լինում է թեթև, միջակ և խորը էտ:

Թեթև երիտասարդացման ժամանակ հեռացնում են 1-3 տարեկան թույլ ճյուղերը, որոնք 15-20 սմ են: Գործընթացը կիրառվում է այն ժամանակ, երբ ծառերն անցնում են առատ բերքատվության շրջանը, և նրանց աճը զգալիորեն թուլանում է, որի արդյունքում սկսում են գոյանալ միայն պտղագոյացություններ:

Թեթև երիտասարդացնող էտի միջոցով հեռացվում են պտղագոյացումների մի մասը և նպաստում վեգետատիվ աճին: Այսպիսի էտի կիրառվում է 15 տարեկանից, իսկ տանձենու, խնձորենու նկատմամբ՝ ավելի վաղ:

Միջակ երիտասարդացում կիրառում են, երբ ծառերի պսակը շատ է ձգվել վեր, պտղաբերությունն անցել է ծայրամասերը, իսկ պսակի կենտրոնը մերկացել է ու զրկվել պտղաճյուղերից, կմախքային և կիսակմախքային ճյուղերից: Ի տարբերություն թեթև երիտասարդացմանը՝ այս դեպքում հեռացվում են կմախքային և կիսակմախքային ճյուղերի 4-5 տարեկան թույլ ճյուղերը, որոնք 10-15 սմ են, ինչպես նաև ծերացած գոյացումները: Այստեղ պետք է հաշվի առնել, որ ճյուղը կարճացնում են այն տարվա աճի մոտից, որտեղ շվի երկարությունը եղել է 30-40 սմ-ից ոչ պակաս:

Միջակ երիտասարդացումից հետո, առաջին 2-3 տարիների ընթացքում ուժեղ աճած շվերն ամռանը ծերատում են՝ երկրորդական ճյուղավորումներ և պտղագոյացումներ առաջացնելու նպատակով:

Ուժեղ երիտասարդացնող էտ: Սա կիրառում են մի քանի ծերացած և ժամանակին չէտված մշակաբույսերի՝ ծիրանենու, խնձորենու և տանձենու նկատմամբ, որոնք համեմատաբար լավ են վերականգնվում և բավականին երկարակյաց են: Այս էտի դեպքում հեռացվում են ծիրանենու 8-10 տարեկան ճյուղերը: Դրանից հետո ծառերն առատորեն պարարտացվում են ու ջրվում: Նոր առաջացած շվերը, երբ հասնում են 25-30 սմ երկարության, դրանց մեծ



մասը ծերատվում են՝ լրացուցիչ աճեր ունենալու համար, իսկ այն շվերը, որոնցով պետք է հետագայում պսակ ձևավորվի, չեն էտվում:

Այն ծառերը, որոնք ծերացել են և հիվանդ են, ավելի նպատակահարմար է, որպեսզի ամբողջությամբ նրանց փոխարինեն նոր տնկիները:

Էտը կատարվում է երկու եղանակով՝ կարճացմամբ և նստացմամբ: Առաջին դեպքում հեռացնում են շվի կամ ճյուղի մի մասը և հատում են դրսի բողբոջի վերևից: Կարճացնող էտի դեպքում ծառի ճյուղերի քանակը պահպանվում է: Նստացնող էտի նպատակն է հեռացնել ավելորդ խտացումները, որոնք աճում են դեպի սաղարթի ներսը, ինչպես նաև 90° և դրանից փոքր անկյան տակ աճող ճյուղերը, որոնք խանգարելու են հետագայում կամ բերքի ծանրության տակ ջարդվելու են: Նստացնող էտն ունի նաև սանիտարական նշանակություն, որովհետև դրա ընթացքում հեռացվում են նաև հիվանդ, չորացած, ջարդված և վնասված ճյուղերը:

Կարճացնող էտը լինում է մի քանի տեսակ՝ ծերատում, թույլ կարճացում, միջակ կարճացում և խիստ կարճացում: Սրանք տարբերվում են իրարից կտրվող ճյուղի երկարությամբ. գործընթացը կախված է ծառերի տարիքից ու էտի նպատակից: Ծերատման դեպքում հեռացվում են տվյալ տարվա շվերի աճման կոները կամ ծայրային մասերը՝ 1-5 սմ երկարությամբ, թույլ կարճացման դեպքում՝ շվի 1/3 մասը, միջակի դեպքում՝ 1/2-ը, իսկ խիստ կարճացման ժամանակ՝ 2/3 մասը:

Տարիքավոր ծառերի մոտ բերքատվության և աճի պրոցեսները թուլանալիս, ինչպես նաև դրանց համամասնությունը պահպանելու համար, 3-5 տարեկան ճյուղերը խորը էտում են, իսկ երբ կմախքային ճյուղերը սկսում են մահանալ, և սաղարթի կենտրոնը մերկանում է, այս դեպքում կիսակմախքային և կմախքային ճյուղերը երիտասարդացման նպատակով խիստ կարճացնում են:

Գենիկ Մովսիսյան
կենսաբանական գիտությունների թեկնածու

ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ԲԱՆՋԱՐԱՅԻՆ ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ՍԱԾԻԼՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄ /Բաց և ծածկած գրունտի համար/

Սևնդարար լուծույթը պատրաստել՝ 10լ ջրին ավելացնելով 15-20 գ համակցված պարարտանյութեր՝ Կրիստալոն կամ Մասթեր (NPK/13:40:13; NPK/20:20:20): Խոնավության և լավագույն ջերմաստիճանի (24-26 °C) պայմաններում լուլիկի սերմերը սովորաբար ծլում են 4-5, իսկ տաքդեղինը և սմբուկը՝ 6-8 օրում:

Շաքիլատերևների բացվելուց հետո ջերմաստիճանն իջեցվում է ցերեկը մինչև 18-20 °C, իսկ գիշերը՝ 15-16 °C, որպեսզի սածիլները չձգվեն: Մի շաբաթ հետո ջերմաստիճանը բարձրացվում է՝ ցերեկը արևային եղանակին՝ 20-22 °C, ամպամած օրերին՝ մինչև 18-19 °C, գիշերը՝ 17-18 °C: Սածիլները ջրել չափավոր՝ ըստ պահանջի:



Պոմիդորի սածիլները պլաստիկ բաժակներում

Ծածկած գրունտի համար

Ջերմատանը սածիլներն աճեցվում են միայն թաղարային եղանակով: Բոլոր մշակաբույսերի ցանքն անհրաժեշտ է կատարել սորտային լավորակ գտված, ստուգված և ախտահանված սերմերով: Ախտահանված սերմերը

կարելի է և նպատակահարմար է ցանել տորֆով կամ հողախառնուրդով (7 մաս տորֆ, 2 մաս բուսահող, 1 մաս ճմառո) լցված պոլիէթիլենային խոռոչիկներում: Նախքան ցանքը, խոռոչիկները լավ ջրվում են սևնդարար լուծույթով, յուրաքանչյուր խոռոչիկում դրվում է 1 հատ սերմ: Ցանքից հետո սերմերը ծածկվում են տորֆի կամ հողախառնուրդի բարակ շերտով և պոլիէթիլենային թաղանթով՝ հավասարաչափ ծելու համար: Խոռոչիկները տեղադրվում են հողի վրա, որը պետք է լինի հնարավորին չափ հարթ և ծածկված սպիտակ պոլիէթիլենային թաղանթով, որպեսզի արմատները գերծ մսան հողի մեջ թափանցելուց և հողի հիվանդություններին: Ծլման շրջանում պահպանել խոնավությունը:

Սածիլների աճեցման սկզբնական շրջանում ջերմաստիճանը պետք է պահպանել 24-25 °C սահմաններում, որպեսզի շատ չձգվեն: Սածիլների մշակության ընթացքում ջրումները կատարվում են սևնդարար լուծույթով, որը 1լ ջրում պարունակում է՝ N-200, P-80, K-160, Ca-280, Mg-50 մգ, ինչպես նաև միկրոտարրերով՝ Fe-4, B-0,5, Mn-0,5, Zn-0,05, Cu-0,05 մգ/լ:

Երբ սածիլները հասնում են 7-10 սմ բարձրության, դրանք պետք է վերատնկել տորֆով կամ հողախառնուրդով լցված պլաստիկ բաժակների մեջ:

Գ. Սարգսյան

գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Բանջարաբուսության և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

ՊԱՏԱՏՈՒԿ ԿԱՄ ԱՅՈՒՐՎԵՂԱՅԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Պատատուկ դաշտայինը պատատուկազգիների (Convolvulaceae) ընտանիքի բազմամյա, երկշաքիլավոր խոտաբույս է:

Արմատն առանցքային է՝ 1-3 մ խորացող, կյանքի 2-3 տարիների կողային հորիզոնական արմատներից սկսում են զարգանալ նոր ուղղահայաց արմատներ ու բույսեր: Ցողունը, որի երկարությունը 1-1.5 մ է փաթաթվում է հարևան բույսերի ցողուններին, սեղմում, ճնշում է դրանց՝ խախտելով բնականոն աճը: Տերևները նետասլաքաձև են: Ծաղկում է ամռանը, մեղրատու բույս է: Ծաղկաբաժակն ու ծաղկապսակը ծուլաթերթ են, ծաղկապսակը ձագարած է, ունի 5 սպիտակ կամ վարդագույն թերթիկներ, առեջները 5-ն են: Պտուղը երկփեղկ, երկտուն տուփիկ է, յուրաքանչյուր բնում կա մեկական կլորավուն սերմ (1000 սերմը կշռում է 5-6 գ): Սերմը պահպանում է ծլունակությունը՝ 20-22 տարի:

Ըստ հնագույն ավանդազրույցի՝ երկարատև ճամփորդությունից հոգնած Աստվածամայրը նստում է քարի վրա, այդ պահին բացվում են պատատուկի ծաղիկները, ցրվում են ամպերն ու Աստվածածինը հագեցնում է իր ծարավը՝ օգտագործելով պատատուկի ծաղկապսակը որպես գավաթ: Գրիմ եղբայրներն անվանել են պատատուկի ծաղիկները՝ «Աստվածամոր գավաթներ»: Բույսի լատիներեն անվանումը՝ փաթաթվող բույս է: Բնության մեջ հանդիպում են պատատուկի (գրականության մեջ օգտագործվում է նաև պատուտակ անվանումը) մոտ 250 տեսակ: Որպես զարդաբույս՝ մշակվում է պատատուկ եռագույնը (C. Tricolor), որը միամյա բույս է (տե՛ս, Լ.Վ. Հարությունյան «Զո շրջապատի ծառերը»):



Պատատուկի ժամանակակից ուսումնասիրությունները և բուժիչ հատկությունների համեմատությունը Այուրվեդայի դեղաբանական ցանկում պատատուկն ընդգրկված է եղել Շանկխապուշաի կոչվող խմբի մեջ, որն ընդգրկել է թվով 4 բույսեր: Հեղինակներն ուսումնասիրել են վառ կապույտ ծաղկող բազմացողուն (C. pluricaulis Choisy) պատատուկի քիմիական բաղադրությունն ու հատկությունները:

Շանկխապուշաի բույսերից (պատատուկ, կլիտորիա, Էվոլվոլուս ու կանսկորա) առավել նախընտրելի էր պատատուկը: Ըստ Այուրվեդայի՝ այդ բույսերից ստացված պատրաստուկներն օգտագործվել են բուժական նպատակներով՝ որպես գլխուղեղի աշխատանքն ակտիվացնող, նյարդերը հանգստացնող, լուծողական, տազնապի զգացումը հեռացնող միջոցներ նաև՝ ներքզի, հոգնածության դեպքերում:

Օգտագործվել են բույսի ցողունը, տերևը, ծաղիկը, սերմը, որոնց պատրաստուկներն անհամ են կամ դառն: Հումքը թրմել են ջրում՝ չամանի սերմի հետ կամ եփել են կաթի մեջ:

Քիմիական բաղադրությունը

Պատատուկի բոլոր տեսակներին բնորոշ՝ կենսաբանորեն ակտիվ տրոպալանային ալկալոիդները, որոնք հայտնաբերվել են մոտ 70 տարի առաջ, բավականին լավ են ուսումնասիրված: Ներկայումս դրանցից առանձնացվել են ալկալոիդներ կոնվուլամինն ու սկոպոլետինը: Բույսը պարունակում է գլիկոզիդ կոնվուլվոլին, կարոտին, E և C վիտամիններ, խեժ, դառն ու փրփրանյութեր, կոմարին, սպիտակուցները տրոհող՝ պրոտեոլիտիկ խմորիչներ: Արմատում հայտնաբերվել են ճարպաթթուներ՝ հիմնականում պալմիտինի, միրիստինի ու լինոլի: Ալկալոիդները հիմնականում պարունակվում են սերմում, որը թունավոր է: Բույսի մեջ հայտնաբերվել են. նատրիում, ցինկ, մագնեզիում, մանգանեղ, պղինձ, երկաթ:

Ուշադրություն: Պարզվում է, որ պատատուկը երկաթի շտեմարան է: Ըստ Երևանի բուսաբանական այգու մասնագետների՝ պատատուկ դաշտայինը պարունակում է 0.3-5% խեժային գլյուկոզիդային միացություններ: Ծաղկման շրջանում տերևներում հայտնաբերվել են 68 մգ% կարոտին, 91.4-134 մգ% վիտամին C: Վերջին տարիներին ուսումնասիրվել է պատատուկի ազդեցությունն առնետների եւ մկների վրա, հրապարակվել են որոշ նախնական արդյունքներ. նկատվել է ճանաչողական ֆունկցիայի բարելավում: Պատատուկը պաշտպանում է այլումիկի վնասակար ազդեցությունից (նյարդապաշտպան հատկություն): Որոշ փորձերում նկատվել է հակադեպրեսիոն ազդեցություն: Նվազեցնում է տազնապի զգացումը և ունի հակաթրեսային ու հանգստացնող հատկություններ: Մեկ հետազոտության ընթացքում նկատվել է հակախոցային ազդեցություն: Արմատի պատրաստուկները նվազեցնում են վահանագեղձի T3 հորմոնի պարունակությունն արյան մեջ:

ԾՐԱԳԻՐ

Դասընթացներ ՀՀ Լոռու մարզի կին գործարարների համար

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ) և Կին ձեռներեցների ցանցը (ԿԶՑ), «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, ՀՀ Լոռու մարզում կազմակերպել էին ֆինանսական դասընթացներ: Դասընթացն իրականացնելու համար ֆինանսական աջակցություն է տրամադրել Գերմանական խնայբանկերի միությունը (SBFIC):



Դասընթացներին մասնակցում էին ՀՀ Լոռու մարզի Տաշիրի, Ստեփանավանի, Սպիտակի, Ծիրակամուտի, Զրաշենի քաղաքի գործող և սկսնակ կին ձեռներեցները, գյուղատնտեսները, կանանց ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչները:


Դասընթացներին մասնակցած կանայք հնարավորություն ունեցան համալրել իրենց գիտելիքները և տեղեկատվություն ստանալ հաշվապահական և հարկային հաշվառման, քաղաքացիական և աշխատանքային իրավունքի ոլորտներից:

2013թ. մայիսից «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպության կողմից Լոռու մարզում իրականացվում է «Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագիրը: Ծրագրի գործընկերներն են՝ CISP կազմակերպությունը, Լոռու մարզպետարանը և Վանաձորի քաղաքապետարանը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 768.357.95 €, որի 80% ֆինանսավորում է Եվրամիությունը, իսկ 20%-ը՝ ՀԵԿԱ-ն:

«Կանանց սոցիալ-տնտեսական հզորացում Հայաստանում» ծրագրի նպատակն է՝ խթանել Լոռու մարզի կանանց սոցիալ-տնտեսական կարողությունների զարգացումը՝ այսպիսով նպաստելով կանանց սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԵՏԱԲՈՔԻՐ Է...



«Սյունիք-Ջարգացում» ՀԿ-ի կողմից իրականացվող Համայնքային Ջարգացման ծրագրի շրջանակներում, Վայոց ձոր մարզի Գեղափ համայնքում գործող փակարանային փոփոխությունը մարզելի գներով առաջարկում է բարձրորակ պողպատի փակարաններ (ընկույզ, փանձ, խնձոր, ծիրան, սերկևիլ, դեղձ, սալոր, բալ, կեռաս):

Վերապատրաստված մասնագետների կողմից գնորդներին տրամադրվում է նաև այգու մշակության վերաբերյալ փորձեցվածական նյութեր և խորհրդատվություն:

Դիմել Արամ Հակոբյանին:

Հեռ.՝ 093-46-21-93:



Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարան ձեռք բերելու համար կարող եք զանգահարել 011 23 14 30 հեռախոսահամարով:



Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև «Նոյան Տասն» և «Բակինիար» գրատներում:

ԳԱՐՆԱՆ ԱՌԱՋԻՆ ԾԱՂԻԿԸ

Ձնձաղիկը (գալանտուս, սպիտակաձաղիկ, ձմեռնաձաղիկ) պատկանում է շքանարգիզագզիների ընտանիքի բազմամյա սոխուկավոր խոտաբույսերի ցեղին:

Բույսի գիտական անվանումը ծագել է հունական գալա և անտոս բառից, որը նշանակում է կաթնային ծաղիկ՝ իր գույնի պատճառով: Իսկ ձնձաղիկ անունը կապված է նրա վաղ գարնանը ծաղկելու հետ: Նրանց կարելի է գտնել հենց ձյան տակ, ապրում են բավականին կարճ՝ մի ամիս: Տարածված է Կենտրոնական և Հարավային Եվրոպայում: Հայտնի է մոտ 20 տեսակ, ՀՀ-ում 3 տեսակ՝ ձնձաղիկ ալպիական, ձնձաղիկ անդրկովկասյան և ձնձաղիկ Արտյուշենկոյի: Հանդիպում են հիմնականում Տավուշի մարզում՝ Իջևանում, Աջաջուր գյուղում: Ծաղկում է վաղ գարնանը: ՀՀ-ում ապրող տեսակները դեղաբույսեր են, պարունակում են ալկալոիդներ: Ալպիական ձնձաղիկը տարածված է ստորին գոտու կաղնու և հաճարենու անտառներում: Այդ տեսակը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Ամեն տարի ապրիլի 19-ին աշխարհի շատ երկրներում նշվում է ձնձաղիկի օրը:



Ձնձաղիկի պատմությունը սկսվում է Անգլիայից: Աշխարհի տարբեր երկրներում, կապված կլիմայական պայմանների հետ, այն աճում է հունվարից մինչև ապրիլ ընկած ժամանակահատվածում, և քանի որ Մեծ Բրիտանիայում դրա ծաղկումը սկսվում է ապրիլից, այդ պատճառով էլ տոնը նշվում է ապրիլին: Անգլիայում ձնձաղիկները շատ հայտնի ու սիրելի ծաղիկներ են: Ենթադրվում է, որ այն կախված է հին անգլիական սնահավատության հետ, տան շրջակայքում ծաղկած ձնձաղիկները, պահպանում են տունը անցանկալի հյուրերից և վատ էներգիայից: Ու բացի այդ, նրանք առաջին ծաղիկներն են, որոնք հայտնվում են ցուրտ ձմեռվանից հետո և դրանով իսկ խորհրդանշում են գարնան գալուստը, ջերմության հաղթանակն ընդդեմ ցրտի և լավագույնն ունենալու հույս ու հավատ են ներշնչում մարդկանց: Նրանցով զարդարված կարելի է տեսնել անգլիական շատ տներ, այգիներ, պուրակներ, իսկ ձնձաղիկն անգլիացիներին հատկացնում է այնքան ժամանակ, ինչքան օրինակ հոլանդացիներ կակաչներին:

Տարբեր երկրներում տարբեր կերպ են անվանում ձնձաղիկը: Անգլիացիներն անվանում են այն ձյան կաթիլ կամ ձնե ականջող, չեխերը՝ փաթիլ, գերմանացիները՝ ձնե գանգակներ, իսկ մենք՝ ձնձաղիկ: Այսինքն ձյան տակից առաջինը երևացող: Երբեմն նաև ձնձաղիկ են անվանում այնպիսի ծաղիկների, որոնք ծաղկում են վաղ գարնանը: Ձնձաղիկը նաև համարվում է առեղծվածային ծաղիկ, է, պատահական չէ, որ ձնձաղիկի մասին կան բազմաթիվ լեգենդներ ու առեղծվածներ: Դրանցից ամենատարածվածն այն է, որ երբ Ադամն ու Եվան արտաքսվեցին դրախտից, Եվան այնքան էր տխրել, որ անդադար լացո էր լինում: Ձմեռ էր, ցուրտ ու ձյուն էր գալիս: Աստված, որպեսզի քիչ թե շատ նրա վիշտը մեղմացնի, ստեղծեց ձնձաղիկը Եվայի արցունքներից: Տեսնելով հիանալի ծաղիկները՝ Եվան ուրախացավ և նրա մեջ հույս առաջացավ: Դրա համար էլ ձնձաղիկը շատերը քսում են իրենց աչքերին՝ ի նշան վշտից, տխրությունից ու վատ հիշողություններից ազատում:

Սակայն մեր օրերում ձնձաղիկը հաճախ «մարդկային սիրո» զոհ է դառնում: Նրանք չափազանց գեղեցիկ են, բայց բնության մեջ: Պակված ծաղիկներն ապրում են ընդամենը մի քանի օր:

Շատերն անխղճորեն պոկում են ծաղիկները, արդյունքում ձնձաղիկների թիվն աշխարհում տարեցտարի նվազում է: Իսկ այսօր արդեն ձնձաղիկի շատ տեսակներ գրանցվել են կարմիր գրքում:

Բույսերի պահպանությամբ զբաղվող մարդիկ կոչ են անում ծայրահեղ զգույշ ու նուրբ վերաբերվել ձնձաղիկներին, որպեսզի մեր սերունդները ևս կարողանան հիանալ գարնան առաջին ծաղկով, այլ ոչ թե միայն իմանան, որ եղել է նման ծաղիկ: Բնությանը կարելի է հիանալ նաև առանց այն վնասելու:

Լիլիթ Գասպարյան

ՍԿՍՎԵԼ Է 2016 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱԳՐՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆ» թերթ

1 համարի գինը՝ 120 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 տարվանը՝ 3960 դրամ

«ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագիր

1 համարի գինը՝ 1350 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 տարվանը՝ 8100 դրամ



Բաժանորդագրությունը իրականացնում են Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները «Հայկոստ», «Հայմամուլ», «Պրես-Ատոտաշե» կազմակերպությունները